ԶԼՄ-ՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԽԱՌԱՏՅԱՆ Լ. Ա.

Զանգվածային լրատվամիջոցների անկախության իրավական կարգավիճակը այսօր ոչ միայն առանձին պետությունների, այլ նաև միջազգային ողջ հանրության առանձնահատուկ ուշադրություն և կարգավորում պահանջող խնդիրներից է:

Միջազգային կազմակերպությունների որոշումներում բազմիցս ընդգծվել է ԶԼՄ-ների անկախության առանձնահատուկ կարևորությունը ժողովրդավարական պետություններում. «ԶԼՄ-ների անկախությունը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության բնականոն գործունեության անհրաժեշտ նախապայմանն է, առանց որի, լիիրավ ժողովրդավարության հնարավոր չէ հասնել»[1]: Միևնույն ժամանակ, մամուլի և զանգվածային մյուս լրատվամիջոցների (ռադիոյի, հեռուստատեսության) ազատությունը պատ-կանում է քաղաքակրթության այնպիսի արժեքներին, ինչպիսիք են մտքի, խղճի և ոգու ազատությունը[2]: Առաջին հայացքից թվում է, որ «ԶԼՄ-ների անկախություն» և «ԶԼՄ-ների ազատություն» հասկացությունները միևնույն իմաստն արտահայտող կատեգորիաներ են, սակայն ընդհանուր հատկանիշներով հանդերձ, այդ երկուսի միջև նկատելի են էական տարբերություններ:

Ընդհանուր իմաստով՝ ԶԼՄ-ների ազատությունը և անկախությունը մամուլի ազատությունն է պետության միջամտությունից: *Սակայն ԶԼՄ-ների բացարձակ անկախություն գոյություն չունի, այն ենթակա է օրենսդրական սահմանափակումների՝ ի պաշտպանություն այլ իրավաչափ արժեքների, որոնք բացարձակապես անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում և ուղղված են այլոց իրավունքների և օրինական շահերի, ազգային անվտանգության, հասարակության բարօրության, սահմանադրական կարգի, շրջակա միջավայրի պաշտպանությանը: ԶԼՄ-ների իրավունքների և գործունեության սահմանափակումներ առկա են ԱՄՆ-ի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի սահմանադրություններում և օրենքներում: Այսպես, օրինակ, Ֆինլանդիայի՝ 2004 թ. «Զանգվածային լրատվամիջոցներով արտահայտվելու ազատության մասին» օրենքը սահմանում է, որ պետական մարմնի միջամտությունը ԶԼՄ-ների գործունեությանը կարող է իրավաչափ լինել միայն այն դեպքում, երբ այն անհրաժեշտ է և հաշվի է առնում արտահայտվելու ազատության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում[3], ինչը, ըստ էության, համահունչ է և*

---

[1] Возчиков В.А. *Медиакультура, телевидение и право на информацию (Философия права, 2005, N 3, с. 68-74):*

[2] *Տե՛ս* Корконосенко С.Г. *Основы журналистики, М., 2002, с. 228.*

[3] *Տե՛ս Finlex, Электронный ресурс, – Электрон. дан. – Режим доступа:* http://www.finex.fi/english/laws/index.php.

համապատասխանում է Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների մասին եվրոպական համաձայնագրի (ՄԻԱԵՀ) պահանջներին:

ԶԼՄ-ների ազատությունը, նախ և առաջ, արտահայտվում է լրատվամիջոցի գործունեությամբ, որը ենթադրաբար ազատ է գրաքննությունից և պետական իշխանության միջամտությունից: Մինչդեռ անկախ լինելու հանգամանքը չի արտահայտվում անկախությամբ միայն պետական մարմիններից: Հաճախ «լրատվամիջոցները կախվածության մեջ են լինում նաև խմբագրություններից, ԶԼՄ-ների հիմնադիրներից, խմբագրական կոլեկտիվից, և երբեմն էլ՝ հրապարակված նյութերի «հերոսներից»»[4]: Դրա հետ մեկտեղ, պետք է նկատել, որ ԶԼՄ-ների ազատությունը որևէ կերպ չի սահմանափակում կամ խոչընդոտում այլ անձանց, մասնավոր կամ պետական կառույցների ազատությունը:

Ընդհանուր առմամբ, երբ խոսքը ԶԼՄ-ների իրավական կարգավիճակի մասին է, ապա նկատի են առնվում օրենսդրությամբ սահմանված՝ ԶԼՄ-ների անկախության երաշխիքները: Հետևաբար՝ անկախությունը ցուցադրական, կարելի է ասել, վերացական հասկացություն է, որը կոնկրետ ԶԼՄ-ի պարագայում, կարող է իրացվել միայն բացարձակ անկախության միջոցով կամ եղանակով: Իր հերթին, ԶԼՄ-ների ազատությունը ԶԼՄ-ների անկախության գլխավոր սահմանադրական երաշխիքն է:

Ազատությունը կոնկրետ հասկացություն է, որն ամրագրվում է հստակ՝ ԶԼՄ-ների անկախության իրավական երաշխիքների վերաբերյալ նորմերով, ինչպես նաև այնպիսի նորմերի միջոցով, որոնցով իշխանությունները ստանձնում են համապատասխան պարտավորություններ ԶԼՄ-ների, այսինքն՝ հանրային կամքի կամ կարծիքի նկատմամբ: ԶԼՄ-ների և՛ անկախությանը, և՛ ազատությանը հասնելու ամենաարդյունավետ միջոցը՝ դրանց սահմանադրաիրավական ամրագրումն է և օրենսդրական կարգավորումը:

ԶԼՄ-ների ազատության և անկախության հիմնախնդիրը բազմիցս արտացոլվել է միջազգային տարբեր համաձայնագրերում: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 19-րդ հոդվածը, ՄԻԱԵՀ-ի 10-րդ հոդվածը երաշխավորում են անձի՝ կարծիքն ու համոզմունքներն ազատ արտահայտելու իրավունքը, լրատվության միջոցով տեղեկատվություն և գաղափարներ որոնելու և ստանալու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից և այլն: Բացի անկախության երաշխիքներից, ՄԻԱԵՀ-ի 10-րդ հոդվածն ամրագրել է արտահայտվելու ազատության սահմանափակումներ: Դրանք, ընդհանուր առմամբ, համապատասխանում են ժողովրդավարության սկզբունքներին, որոնց միջոցով հնարավոր կլինի կանխա-

[4] Տե՛ս Романович Н.А. *О независимости от власти и взгляде общества на миссию российского телевидения. Статья* www.mognovse.ru

տեսել և գիտակցել այն հետևանքները, որոնք առաջանում են որոշակի հանգամանքների բերումով՝ կոնկրետ իրավիճակների պայմաններում[5]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) իր նախադեպերում նույնպես անդրադարձել է ԶԼՄ-ների անկախության հիմնախնդրին՝ հետևյալ իրավական դիրքորոշմամբ. «ԶԼՄ-ների անկախության հիմնախնդրի ուսումնասիրությունը պահանջում է առանձնահատուկ պաշտպանություն, որպեսզի ԶԼՄ-ները կարողանան կատարել իրենց վերապահված «հասարակական պաշտպանի» կենսական կարևոր դերը և այնպիսի տեղեկատվություն տարածեն, որն ունի հասարակական մեծ հետաքրքրություն[6]:

Մ. Ֆեդոտովը, խոսելով ԶԼՄ-ների անկախության վերաբերյալ, նշում է, որ լրատվամիջոցի իրավական կարգավիճակը (լրատվամիջոցի անկախությունը) տարածվում է ոչ միայն բարձրագույն արժեքների՝ մտքի խոսքի, կարծիքի ազատության, այլ նաև պետական, հասարակական և ազգային անվտանգության վրա: Ըստ նրա, ԶԼՄ-ների իրավական կարգավիճակը, ազատ մամուլը և խոսքի իրավունքը ազգային անվտանգության երաշխավորներն են: Եթե ԶԼՄ-ները կախվածության մեջ լինեն պետական մարմիններից, ապա խոսքի ազատությունը ազգային անվտանգության համար անխուսափելիորեն կվերածվի իրական սպառնալիքի: Ուղիղ իմաստով, ազգային անվտանգության ապահովումը պետության տնտեսական և քաղաքական անկախության, տարածքային ամբողջականության և իրավական ինքնիշխանության, մշակութային արժեքների և հասարակական կյանքի պաշտպանությունն է այլ պետությունների հնարավոր (ոչ իրավաչափ) գործողություններից, հետևաբար՝ «անկախ ԶԼՄ-ների գոյությունը պարտադիր է և անհրաժեշտ այնքանով, որքանով խոսքի ազատության իրավունքը ազգային անվտանգության գլխավոր երաշխիքն է»[7]: Իր հերթին, պետությունը, ազգային անվտանգության պաշտպանության նկատառումներից ելնելով, որպես հիմնավոր փաստարկ՝ վկայակոչում է գրաքննությունը և կոնկրետ տեղեկատվության գաղտնիության հաստատումը:

Իսկ ինչպիսի՞ իրավական կարգավորում ունեն ԶԼՄ-ները ՀՀ-ում: Արդյո՞ք դրանք համապատասխանում են միջազգային իրավական նորմերի պահանջներին, և որքանո՞վ է պետության կողմից ապահովվում ԶԼՄ-ների անկախությունը: Հայաստանի Հանրապետությունում ԶԼՄ-ների անկախության իրավական կարգավորումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. ԶԼՄ-ների անկախության կարգավիճակը դեռևս չի համա-պատասխանում ժողովրդավարական ԶԼՄ-ների սկզբունքներին և պահանջներին:

---

[5] *Sunday Times v. United Kingdom, Judgment of 26 April 1979.*

[6] *Article 19, միջազգային կազմակերպություն "Всемирная компания за свободу слова", www.osce.org.*

[7] *http://tvrain.ru/articles/mihail_fedotov_uveren_chto_protsess_unichtozhenija_nezavisimyh_smi_prodolzhatsja_ne_budet_svoboda_slova_eto. 05.05. 2014 г.*

Խնդիր է առաջացնում նաև այն, որ ներկայիս ԶԼՄ-ների մասին օրենքում «ԶԼՄ-ներ» հասկացությունը չունի հստակ իրավական ձևակերպում, ինչպես այն հանգամանքը, որ օրենսդրորեն կարգավորված չեն ԶԼՄ-ների գործունեությանն առնչվող հարաբերությունները քաղաքացիների, հասարակության և իշխանության հետ. այդ պարագայում հնարավոր կլիներ որոշել՝ որքանո՞վ են իրականում անկախ ԶԼՄ-ները, և արդյո՞ք դրանք պետական իշխանության գործունեության նկատմամբ հսկողու-թյուն իրականացնող միջոցներ են:

Որևէ օրենքով կամ իրավական ակտով սահմանված չեն «ԶԼՄ-ներ» և «ԶԼՄ-ների անկախություն» հասկացությունները: Լրատվամիջոցի՝ օրենսդրի կողմից տրված սահմանումը թերի է և ոչ ամբողջական, պահպանված չէ իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, ՀՀ ԶԼՄ-ների մասին օրենքի (ընդունված՝ 13.12.2003 թ.) 3-րդ հոդվածով լրատվամիջոցը «տեղեկատվության կամ լրատվության տարածման միջոց է», ինչպես նաև «լրատվական գործակալության և նմանատիպ այլ բնույթի կազմակերպությունների պարբերական հաղորդումներ՝ ուղղված լրատվական գործունեություն իրականացնողներին...»: Այսպիսի սահմանումը հնարավորություն չի տալիս վերջնականապես հասկանալու՝ ԶԼՄ-ները իրավունքի սուբյեկտնե՞ր են, թե՞ օբյեկտներ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ ներկայիս ԶԼՄ-ների մասին օրենքը ընդունվել է 2003 թ., այսինքն՝ այն ժամանակ, երբ լրատվամիջոցները ավանդական էին և դասակարգման չէին ենթարկվում, մինչդեռ արդի պայմաններում՝ համացանցի և էլեկտրոնային այլ լրատվամիջոցների բազմազանությունը պահանջում է նորովի և հրատապ իրավական մոտեցումներ: Պետք է նաև նշել, որ 2003 թ. մինչ այսօր ԶԼՄ-ների մասին օրենքում որևէ փոփոխություն կամ ուղղում չի կատարվել, ինչն ըստ էության, արդեն իսկ վկայում է օրենքի ոչ լիարժեք և անկատար լինելու մասն: Հետևաբար՝ ԶԼՄ-ների անկախության կարգավիճակին անդրադառնալիս, պետք է նաև օրենսդրորեն սահմանել «էլեկտրոնային ԶԼՄ-ներ», «ԶԼՄ-ների անկախություն» և «այլ ԶԼՄ-ներ» հասկացությունները:

Որոշ երկրների ԶԼՄ-ների ոլորտի իրավական ակտերում լրատվամիջոցի սահմանումները տրված են բավականաչափ հստակ: Այսպես, ՌԴ ԶԼՄ-ների մասին օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, ԶԼՄ-ն պարբերական տպագիր հրատարակություն է, ցանցային հրատարակություն, հեռուստաալիք, ռադիոալիք, հեռուստահաղորդում, տեսահաղորդում, կինոքրոնիկ ծրագիր, ինչպես նաև մշտական անվանում ունեցող զանգվածային տեղեկատվության պարբերական տարածման այլ ձև[8]: Բացի ՌԴ-ի վերոնշյալ օրենքից, այդպիսի օրենսդրական

[8] Տե՛ս Закон РФ от 27 декабря 1991 г. № 2124-1 “О средствах массовой информации”. С изменениями и дополнениями: հոդվ. 2: (http://www.consultant.ru/ document/cons_doc_LAW_1511/) :

դրույթներ են պարունակում նաև Ուկրա-ինայի, Մոլդովայի, Վրաստանի, Ֆրանսիայի և այլ պետություն-ների ԶԼՄ-ների մասին օրենսդրությունները:

Պետք է նշել, որ ՀՀ-ում դեռևս մշակված չեն ԶԼՄ-ների անկախության աստիճանը սահմանող և լրատվամիջոցի անկախության գնահատման վերաբերյալ միասնական չափանիշներ: Ինչպես գիտենք, ԶԼՄ-ների անկախությունը երաշխավորվում է ոչ միայն գործող Սահմանադրությամբ և օրենքներով, այլ նաև հասարակության կողմից վերջիններիս նկատմամբ դրսևորված վստահությամբ և գնահատականով: Հետևաբար՝ ԶԼՄ-ների անկախության որակի գնահատման միասնական չափանիշների բացակայության պայման-ներում, յուրաքանչյուր պետություն լրատվամիջոցների անկախության աստիճանը որոշելիս ղեկավարվում է իր իսկ սահմանած չափանիշներով: Առավել ևս աչքի է զարնում ՀՀ օրենքներում այդպիսի միասնական չափանիշներ մշակելու անհրաժեշտությունը:

Հաջորդ խնդիրը, որն առնչվում է ԶԼՄ-ների անկախությանն ու ազատությանը, ԶԼՄ-ների ոլորտի հարաբերությունները կանոնակարգող լրագրողական վարքագծի (էթիկայի) կանոնակարգի առկայության անհրաժեշտությունն է: Վարքագծի նորմեր և կանոններ սահմանող իրավական ակտով պետք է ամրագրվեն ԶԼՄ-ների, լրագրողների, լրագրողական կազմակերպությունների գործողությունների համապատասխան կանոնները, որոնք պետք է ուղեցույց լինեն քաղաքացիների և կազմակերպությունների հետ փոխադարձ հարաբերություններում, և այդպիսով ԶԼՄ-ները ձեռք կբերեին հանրության վստահությունը, և կամրապնդվեր ԶԼՄ-հասարակություն, ԶԼՄ-անհատ և ԶԼՄ-իշխանություններ ինստիտուտների միջև կապը:

Մեր կարծիքով, ԶԼՄ-ների անկախության իրավական կարգավորմանը արդյունավետ լուծումներ տալու և օրենսդրական բացը լրացնելու նպատակով, խիստ հրատապ և անհրաժեշտ է բարելավումներ իրականացնել գործող օրենսդրությունում և կատարել որոշակի փոփոխություններ: Մասնավորապես՝ նպատակահարմար է 2003 թ. ընդունված ԶԼՄ-ների մասին օրենքում հստակեցնել «էլեկտրոնային ԶԼՄ-ներ», «ԶԼՄ-ների անկախություն» և «այլ ԶԼՄ-ներ» հասկացությունները, իրավական կարգավորման ենթարկել յուրաքանչյուր լրատվամիջոցի գործառույթները, ամրագրել ԶԼՄ-ների և լրագրողների գործունեության ապահովման երաշխիքները՝ ներառելով նաև նոր, էլեկտրոնային միջոցների առանձնահատկությունները:

2. ԶԼՄ-ների անկախության հիմնախնդիրը այսօր ոչ միայն անցումային ժողովրդավարության պետությունների, այլ նաև միջազգային ողջ հանրության ուշադրության և քննարկման առարկան է: Տարբեր միջազգային կառույցներ («Լրագրողներն առանց սահմանների», Human Watch Rights, Article 19 և այլն)

պետու-թյունների ազատ մամուլի ինդեքսը որոշելու և գնահատելու նպատակով անցկացնում են ամենամյա մշտադիտարկումներ, որոնց արդյունքների հիման վրա ստացված տվյալներով գրանցվում են խոսքի ազատության բազմաթիվ խախտումներ, գրաքննության դրսևորումներ, լրագրողների իրավունքների խախտումներ:

Հայաստանի Հանրապետությունը 2016 թ. անկախ մամուլի ազատության վերաբերյալ վարկանշային աղյուսակում 180 երկրների թվում զբաղեցրել է 74-րդ տեղը (ինդեքս 28,79), ինչը բավական բարձր ցուցանիշ է նախորդ տարիների համեմատությամբ: ՀՀ-ն «Լրագրողներն առանց սահմանների» միջազգային կազմակերպության մամուլի ազատության ինդեքսում առաջընթաց է գրանցել 4 հորիզոնականով: Այդ մասին նշված է կազմակերպության ամենամյա զեկույցում[9]:

3. ԶԼՄ-ների անկախության աստիճանը կախված է նաև պետական և ոչ պետական կամ մասնավոր ԶԼՄ-ների իրավական կարգավիճակից և գործունեությունից: Սովորաբար, երբ խոսքը պետական ԶԼՄ-ների անկախության մասին է, նկատի են առնվում վերջիններիս ֆինանսական անկախությունը՝ պետության կողմից դրանց ֆինանսական աջակցության ապահովման (սուբսիդավորման) միջոցով: Մասնավոր կամ ոչ պետական ԶԼՄ-ների ֆինանսավորումն իրականացվում է լրատվամիջոցի սեփականատերերի, գովազդատուների և բաժանորդագրվողների միջոցներով: Հետևաբար՝ ԶԼՄ-ների անկախության կարգավիճակի վրա անդրադառնում են դրանց ֆինանսական ապահովվածությունն ու խմբագրական ինքնուրույնությունը:

4. Հայաստանում ԶԼՄ-ների անկախության աստիճանը կախված է նաև երկրում տիրող քաղաքական-տնտեսական իրավիճակից, ինչպես նաև պետության քաղաքական համակարգի, սահմանադրական կարգի, պետական կառավարման համակարգի առանձնահատկություններից, հանրային լսարանի կողմից պետության գործերին ներգրավվածության աստիճանից, սոցիալական և տնտեսական վիճակից:

ԶԼՄ-ների անկախության վրա անդրադառնում են նաև քաղաքացիական հասարակության ակտիվությունը, հասարակության սոցիալական կենսամակարդակը, աշխարհագրական դիրքը, բնակլիմա-յական պայմանները և այլն: Կարծում ենք, որ ԶԼՄ-ների անկախությունը մեծ մասամբ կախված է իրավական, քաղաքական և տնտեսական գործոններից: ***Իրավական են՝*** *ա) Սահմանադրությամբ ամրագրված խոսքի ազատության վերաբերյալ նորմերը և երաշխիքները, բ) քրեական և քաղաքացիական օրենսդրության իրավական նորմերով սահմանված՝ խոսքի և ԶԼՄ-ների ազատության սահմանափակումները, գ) ԶԼՄ-ների ոլորտում լրագրողների կողմից խոսքի ազատության չարաշահումներ թույլ տալու համար (քաղաքացիներին, պաշտոնատար անձանց և պետությանը վիրա-*

[9] http://www.tert.am/am/news/2016/04/20/reporters/1995989:

վորելու) սահմանված տուգանքները կամ այլ պատժամիջոցներ նախատեսող նորմերը և այլն:

Քաղաքական՝ *ա) ԶԼՄ-ներով տարածված՝ պետության, հասարակության կամ գործարարների շահերն արտահայտող հրապարակումները, բ) քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, գործարարների վերաբերյալ տեղեկատվական աղբյուրները, գ) ճշգրիտ, անաչառ և հավաստի լրատվության և բազմակարծության ապահովումը, դ) լրագրողների և ԶԼՄ-ների նկատմամբ բռնությունների ու սպառնալիքների կանխումը:*

Տնտեսական գործոններն են՝ *լրատվամիջոցների սեփականությանն առնչվող հարաբերությունները, մասնավորապես՝* ***սեփականության թափանցիկությունը, կենտրոնացվածությունը,*** *ԶԼՄ-ների արտադրությունը և տարածման սահմանափակումները, լրատվամիջոցների հիմնադրման, թողարկման և շահագործման ծախսերը, լրագրողական հոդվածների բովանդակությունը պաշտոնատար անձանց շահերից բխելու և հրապարակելու նպատակով վճարումների և պատվերների երևույթների արգելակումը:*

Հետևաբար՝ ԶԼՄ-ների անկախությանը հասնելու և լրատվական անխոչընդոտ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է ՀՀ օրենսդրական ոլորտում ոչ միայն ամրագրել վերոնշյալ գործոնները, այլ նաև ունենալ դրանց կիրառելիության գործուն և արդյունավետ կառուցակարգեր:

ԶԼՄ-ների անկախությունը և խոսքի ազատությունը, թեև ոչ բացարձակ, սակայն բարձրագույն արժեքներ են: Ուստի ճիշտ չի լինի դրանք դիտարկել որպես հասարակական ներգործության նկատմամբ զուտ դրական և արդյունավետ միջոցներ: Մամուլի և խոսքի անկախությունը արդյունավետ կարող են համարվել միայն այն դեպքում, երբ դրանք գտնվում և համագոյակցում են այլ, ամենից առաջ՝ բարոյական արժեքների հետ (ասել է, թե՝ ինչ կարելի է անել և ինչ չի կարելի՝ համընդհանուր բարօրության հասնելու համար) միևնույն համակարգում: Եթե մամուլը սահմանափակված չէ ոչ իրավունքով, և առավել ևս՝ բարոյականությամբ, ապա խոսքի ազատությունը և լրատվամիջոցի անկախությունը վերածվում են ամենաթողության և ինչ-որ չափով՝ անիշխանության: Հետևաբար՝ ԶԼՄ-ների անսահման և բացարձակ ազատությունը կարող է ունենալ բացասական հետևանքներ և ոտնահարել ժո-ղովրդավարական մյուս արժեքները:

Այսպիսով, ԶԼՄ-ների անկախությունը և գործունեության ուղղվածությունը՝ որպես քաղաքացիական հասարակություն ձևա-վորող ինստիտուտ, մի կողմից, նպաստում է հասարակության համար կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող պահանջմունքների բավարարմանը, մյուս կողմից, տեղեկատվական քա-ղաքականության ոլորտի զարգացման և բարելավման գործում աջակցում է պետական մարմիններին:

1) ԶԼՄ-ների ազատության և անկախության ապահովումը պայմանավորված է սահմանադրաիրավական երաշխիքների առկայությամբ, ԶԼՄ-ների գործառույթների և իրավունքների ոլորտի հստակ իրավական կարգավորմամբ:

2) ԶԼՄ-ների անկախությունը պայմանավորված է դրանց ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությամբ, ոչ միայն գործող օրենսդրության, այլ նաև լրագրողական էթիկայի կանոնագրքի մշակման և ներդրման շրջանակում. այն հանդես է գալիս որպես ԶԼՄ-ների օրենսդրության բաղկացուցիչ մաս: Լրագրողական էթիկայի կանոնների հստակ սահմանումը և ԶԼՄ-ների ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող դրույթների առկայությունը այն պարտադիր նախապայմանն են, որոնցից էապես կախված են ԶԼՄ-ների անկախությունը և լրագրողների մասնագիտական գործունեության ազատությունը:

3) «ԶԼՄ-ների անկախություն» հասկացությունը սահմանված չէ որևէ օրենքով կամ իրավական ակտով, ինչը ոչ միայն չի համապատասխանում, այլ և հակասում է ժողովրդավարության էությանը և սկզբունքներին: Նպատակահարմար է ներմուծել և օրենսդրորեն սահմանել «ԶԼՄ-ների անկախություն» եզրույթը՝ որպես ԶԼՄ-ների արդյունավետ գործունեության երաշխիք:

4) ԶԼՄ-ների անկախությունը պետք է դիտարկել հասարակությունում առկա իրավական, տնտեսական, սոցիալական և քաղաքական գործոնների տեսանկյունից:

Այսպիսով, ԶԼՄ-ների անկախության և ազատության՝ որպես միմյանցով փոխկապված և փոխպայմանավորված ժողովրդավարության բարձրագույն արժեքների համար առանձնակի կարևորվում են արտահայտվելու, ստեղծագործելու, կարծիքի և մտքի ազատության, տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքներն ու ազատությունները: Բացի այդ, ԶԼՄ-ների անկախության երաշխիքներով ապահովվում են մամուլի և մյուս լրատվամիջոցների իրավունքների իրացումը, գաղափարների և տեղեկությունների անխոչընդոտ տարածումը:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ НЕЗАВИСИМОСТИ И СВОБОДЫ СМИ

ХАРАТЯН Л. А.

Резюме

Вопросы, связанные со свободой и независимостью СМИ, основаны на двух принципах: невмешательство государственной власти в деятельность СМИ, в сферу упорядочения их деятельности и коллегиальности органов, занимающихся регулированием названных процессов с учетом сопряженных с этим политических и

социальных моментов. Из этого следует, что СМИ являются не институтом власти, а институтом общества, призванным представлять интересы общества, его запросы, контролировать власть и содействовать общенациональному развитию.

THE MODERN PROBLEMS OF THE INDEPENDENCE AND FREEDOM OF THE MASS MEDIA

L. KHARATYAN

Abstract

The issues, related to the freedom and independence of the media are based on two principles: non-interference of state authorities in the activities of the media, in the regulation of their activities and the collegiality of the bodies that carry out this regulation, taking into account the largest part of the political and social aspects. This means that the media are not the source of power, but the institution of society, called upon to represent the interests and the request of society, to contor the power and to promote the nation-wide development. The article reveals the issues related to the legal status of the media, the basic of which is the relationship of the international legal norms with the norms of national law.